ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2020-2025 թթ.

ԳԱԳԻԿ ԼԻՊԱՐԻՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Նախաբան 3

2. Քոլեջի առաքելությունը 4

3. Քոլեջի հիմնարար արժեքները 4

Ռազմավարական նպատակներ

4. Որակյալ կրթություն 4

5. Հանրային ներգրավում և ծառայություններ 5

6. Որակյալ մարդկային ռեսուրսներ և ենթակառուցվածքներ 7

7. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում 8

8. Արտաքին կապեր և միջազգայնացում 9

Նախաբան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի գործունեության հիմնական առարկան նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է և նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետների պատրաստումը:

Քոլեջը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր կանոնադրության համաձայն պետք է՝

- իրականացնի ուսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովի նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը
- կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ քոլեջի ուսանողների համար ստեղծի ուսումնառության անհրաժեշտ պայմաններ
- իրականացնի շարունակական կրթության և ուսուցման ծրագրեր
- ապահովի դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստում, որակավորման բարձրացում
- աջակցի քոլեջի ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև քոլեջի ուսանողների մասնակցությանը քոլեջի կառավարմանը և քոլեջի կողմից իրականացվող ծրագրերին
- իրականացնի միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր
- ՀՀ արժանի քաղաքացի և անձ դաստիարակելու նպատակով միջոցներ ձեռնարկի ուսանողների ինքնազարգացման, ռազմահայրենասիրական դաստիարակության, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման համար:

Քոլեջի առաքելությունը

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում ապահովում է որակյալ մասնագետների պատրաստումը տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան՝ զարգացնելով տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը: Ապահովում է կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ, ստեղծում է նպաստավոր պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, և խթանում է երկակի ուսուցման մոդելի ներդրմանը:

Քոլեջի հիմնարար արժեքները

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հիմնարար արժեքներն են.

- ✓ որակյալ կրթությունը,
- ✓ ուսանողները,
- ✓ բարձր որակավորում ունեցող աշխատակազմը,
- ✓ որակյալ ենթակառուցվածքները,
- ✓ հասարակական պատասխանատվությունը,
- ✓ սոցիալական համագործակցության և միջազգային գործընկերության զարգացումը:

Ռազմավարական նպատակներ

Որակյալ կրթություն

Իրականացնել տարածաշրջանի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր՝ պատրաստելով մասնագիտական, հաղորդակցման հմտություններով և կարողություններով օժտված մրցունակ մասնագետներ:

Նախատեսվող գործողությունները

- Նոր արդիական ծրագրեր ներդնելու նպատակով անընդհատ ուսումնասիրել աշխատաշուկայի և տարածաշրջանի առանձնահատկությունները և պահանջները:
- Որակյալ կրթություն ապահովելու համար ներգրավել պրակտիկ մասնագետներ և ոլորտի գործատու դասավանդողներ:
- Մասնագիտական կրթության բնագավառում ապահովել ժամանակակից մոտեցումների կիրառում, հմտությունների և կարողությունների ձևավորմանը միտված ուսումնական փաստաթղթերի և նյութերի մշակում:
- Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:
- Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում(առցանց եղանակով իրականացվող դասընթացների կանոնակարգում, իրականացում, ընդլայնում):
- Որակյալ և հիմնարար կրթություն ապահովելու նպատակով խրախուսել ուսանողների և դասախոսների հետազոտական նախագծերում ներգրավվածությունը:
- Կատարելագործել որակի հսկողության մեխանիզմները, պարբերաբար իրականացնել ինքնավերլուծություն:
- Ուսանողների մոտ զարգացնել հաղորդակցման հմտությունները:

Հանրային ներգրավվածություն և ծառայություններ

Խթանել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը, հանրային ծրագրերում և ծառայություններում ներգրավվածությունը:

Նախատեսվող գործողությունները

- Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները, գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից:
- Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:
- Իրականացնել լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մշտադիտարկում՝ պահանջարկված դասընթացների ցանկը բացահայտելու և դրանց մշակումը ապահովելու համար:
- Նպաստել և խրախուսել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և առանձին կազմակերպությունների աշխատակիցների նպատակային վերապատրաստմանը, որակավորման բարձրացմանը:
- Կատարելագործել լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերը՝ հստակեցնելով ծրագրերի նպատակները, ելքային արդյունքները, իրականացման ձևերը և կրթության որակի ապահովման պահանջները:
- Ապահովել լրացուցիչ և շարունակական կրթության մատչելիությունը հանրության լայն շերտերի համար, ինչպես նաև նախատեսել որոշակի աջակցման մեխանիզմներ լրացուցիչ և շարունակական կրթության համակարգում քոլեջի սովորողներին և շրջանավարտներին ներգրավելու համար:
- Նախաձեռնել հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառելիությունը շարունակական կրթության և հեռակա ուսուցման համակարգերում:
- Զարգացնել քոլեջի ներգրավումը հանրային ծրագրերին և նախաձեռնություններին:
- Զարգացնել ինտելեկտուալ, մարզամշակութային, բնապահպանական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:
- Քոլեջի կանոնադրությանն ու օրենսդրությանը համապատասխան կազմակերպել ձեռնարկատիրական գործունեություն:

- Հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները և աշխատաշուկայի պահանջները՝ ներդնել հիմնական և կարճաժամկետ նոր ծրագրեր հետևյալ ուղղություններով՝
    - սերվիս
    - ջերմատնային տնտեսություն
    - այլընտրանքային էներգիա
    - կարուձև
    - վարսահարդարում
    - սեղանի դիզայն
    - ֆլորիստիկա
- Ապահովել քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և քոլեջի գործունեության թափանցիկությունը շահագրգիռ կողմերի համար:
- Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ՝ ստեղծելով քոլեջի եռալեզու կայք, լուսաբանել քոլեջի գործունեությունը սոցիալական տարբեր հարթակներում:

Որակյալ մարդկային ռեսուրսներ և ենթակառուցվածքներ

Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, բարելավել աշխատանքային միջավայրը:

Նախատեսվող գործողությունները

- Մշակել և իրականացնել դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:
- Ուսումնական պրոցեսում ներգրավել շատ թվով գործող մասնագետներ:
- Զարգացնել և արդիականացնել քոլեջի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան և ռեսուրսները:

- Ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար բարելավել անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, մասնագիտական կաբինետները, տեխնիկական հագեցվածությունը, արդիականացնել մարզադահլիճը, ստեղծել էլեկտրոնային գրադարան:
- Քոլեջի և ներդրողների ջանքերով քոլեջին կից տարածքում կառուցել ջերմոց և արևային էլեկտրակայան:
- Մշակել և ներդնել դասախոսների մանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների գործուն համակարգ:
- Խթանել դասավանդման արդյունավետության բարձրացումը քոլեջում, ձևավորել խրախուսման գործուն համակարգ լավագույն մանկավարժական-մեթոդական փորձի ճանաչման և խրախուսման համար:
- Խրախուսել դասախոսներին՝ իրականացնելու գիտահետազոտական աշխատանք:

Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում

Ապահովել քոլեջի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը:

Նախատեսվող գործողությունները

- Բարելավել քոլեջի կառավարման համակարգը, նպաստել դրանց արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը:
- Կառավարման բոլոր օղակներում ներգրավել ներքին շահակիցներին՝ մասնավորապես ուսանողներին:

  Ապահովել ֆինանսական ներհոսք՝ ներդնելով լրացուցիչ կարճաժամկետ ծրագրեր, ինչպես նաև ստեղծել արտաբյուջետային եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից:

- Ձգտել պետական բյուջետային ֆինանսական ծավալների ոչ միայն պահպանման, այլև կայուն աճի:
- Ակտիվացնել քոլեջի մասնակցությունը կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին:
- Ինքնարժեքի վերլուծության հիման վրա ձևավորել ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսման վարձի հաշվարկի մեթոդաբանություն՝ առաջնորդվելով մասնագիտության տնտեսական նպատակահարմարության, անհրաժեշտ եկամտաբերության և մրցունակության նկատառումներով:

Արտաքին կապեր և միջազգայնացում

Արտաքին կապերի միջոցով իրականացնել փորձի փոխանակում՝ նպաստելով քոլեջի միջազգայնացմանը:

Նախատեսվող գործողությունները

- Արտաքին կապեր ստեղծելու և ամրապնդելու համար ստեղծել եռալեզու պաշտոնական կայք, ֆեյսբուքյան էջ՝ նպատակ ունենալով քոլեջի մասին տալ տեղեկատվություն արտերկրյա ներդրողներին, դոնոր կազմակերպություններին:
- Գտնել և կապեր հաստատել միջազգային նմանատիպ ծրագրեր ունեցող այլ հաստատությունների հետ, իրականացնել փոխանակման ծրագրեր:
- Իրականացնել արդյունավետ PR միջոցառումներ՝ ներդրողների համար ստեղծել գրավչություն: